

## ՈՐՈՇՈՒՄ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի  
գիտական խորհրդի 2015 թ. մարտի 31-ի նիստի

( արձանագրություն № 10 )

Լսելով և քննարկելով << Ուսանողական խորհրդի գործունեության>> վերաբերյալ  
հարցը (զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյան)՝  
գիտական խորհուրդը որոշում է.

Ուսանողական խորհրդի նախագահի ներկայացրած հաշվետվությունը գնահատել  
բավարար:

Գիտական խորհուրդն առաջարկում է ուսանողական խորհրդի ուշադրությունը  
հրավիրել հետևյալ աշխատանքների վրա.

1. Կատարել ընդհանրական վերլուծություն ուսանողներին հուզող խնդիրների  
վերաբերյալ:
2. Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերին և  
միջոցառումներին ներգրավել առավել շատ թվով ուսանողներ:
3. Ուսանողական խորհրդի աշխատանքային պլանը կազմելիս հաշվի առնել  
ուսանողների սոցիալական խնդիրներն ու պահանջմունքները:
4. Ընդլայնել կապերը արտերկրյա ուսանողական և երիտասարդական  
կազմակերպությունների հետ, ինչպես նաև նպաստել ուսանողների  
փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ռուբեն Միրզախանյան